ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/102

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի տնօրենի ժ/պ՝

Մ. Մարտիրոսյանի

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Է. Դավթյանի (լիազորագիր տրված՝ 14.01.2020թ.)

Քննելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 30.12.2019թ. ներկայացված և 30.12.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/102 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն ուսումնասիրելով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Բժշկական ապահովագրության ծառայություններ» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրերով գնանշման հարցման (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հրավերով գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությունը գտնում է, որ այն կայացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) և Ընթացակարգի հրավերի մի շարք դրույթների խախտմամբ, որն էլ հանգեցրել է Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

Հրավերի առաջին մասի 5.2. կետի համաձայն՝ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հրավերով հստակ կարգավորված է նաև բոլոր այն դեպքերը, երբ մասնակցի ներկայացված հայտը ենթակա չէ մերժման, որում թվարկված են բոլոր այն իրավիճակները, երբ ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում առկա են որոշակի անհամապատասխանություններ, մասնավորապես.

Մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն,

սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված.

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումարները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը.

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Հրավերի 5.3. կետի համաձայն՝ Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Հրավերի 8.8 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.9 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն. հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին' առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի

1-ին մասի 5.2. կետին՝ մասնավորապես գնային առաջարկի «շահույթ» սյունակը լրացված չէ:

Հանձնաժողովը քննարկել և որոշել է հայտի գնահատումն իրականացնել նույն նիստում: Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց բոլոր բավարար գնահատված հայտեր ներկայացված մասնակիցներին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցել և հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ստացվում է հանձնաժողովը ուսումնասիրելով ներկայացված հայտերը արձանագրել է, որ իբրև Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում Հրավերի 5.2. կետի պահանջներին, սակայն չի մատնանշել, թե կոնկրետ որ պահանջին չի համապատասխանում: Նշում է կատարվել, որ գնային առաջարկի «շահույթ» սյունակը լրացված չէ, սակայն այն չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի «շահույթ» սյունակում կատարված է լրացում «-» նշանով, այսինքն Ընկերությունը տվյալ լրացումով հստակ արտահայտել է իր դիրքորոշումը, որ շահույթ չի նախատեսում, ավելին Հրավերով և նույն վկայակոչված 5.2. կետով որևէ կերպ կարգավորված չէ այն հանգամանքը, երբ որևէ մասնակից չի նախատեսի շահույթ ինչ լրացում պետք է կատարվի, քանի որ չնախատեսման դեպքում կամարտահայտությունը պետք է լինի բացասական ձևով, իսկ թվի լրացում հնարավոր չէ, հնարավոր չէ նաև 0 լրացումը քանի որ այն թիվ չէ:

Ստացվում է մի իրավիճակ, երբ Հրավերով չկարգավորված հարցի բացասական հետևանքը Հանձնաժողովի կողմից արհեստականորեն դրվում է մասնակիցների վրա, ավելին մատնանշվում է որ 5.2. կետի պահանջներն են խախտվել «շահույթ» սյունակի լրացման գծով, այնինչ նույն տրամաբանությունը գործում է նաև «ԱԱՀ» սյունակի պարագայում և այստեղ նվազագույնը հարց է առաջանում, ինչու նույն Հանձնաժողովը «ԱԱՀ» սյունակի նույն տրամաբանությամբ լրացումը համարում է Հրավերի պահանջներին համապատասխան, իսկ «Շահույթ» սյունակը՝ ոչ:

Տվյալ պարագայում, եթե Հանձնաժողովը գործեր իրավաչափորեն, ապա պետք է հնարավորություն տար մասնակցին շտկել անհամապատասխանությունը այն տրամաբանությամբ, որ մասնակիցը կպարզաբաներ, որ շահույթ չի նախատեսում և

Հանձնաժողովը նվազագույնը կբացահայտեր, որ ոչ թե սյունակը լրացված չէ, այլ մասնակիցը չի նախատեսել շահույթ, ինչպես օրինակ չի առաջանում ԱԱՀ և դրա իսկ պատճառով տվյալ սյունակը լրացվում է «-» նշանով:

Ավելին, գնահատող հանձնաժողովն իր Արձանագրությամբ արձանագրել է որոշակի փաստեր, սակայն այդպես էլ չի տվել գնահատական և որոշում, թե ի վերջո տվյալ ծածկագրով գնանշման շրջանակում մասնակիցներից որի հայտն է բավարար գնահատվել, որինը՝ ոչ: Նշում է կատարվել, որ գնահատման թերթիկները կցվում է Արձանագրությանը, այնինիչ որևէ թերթիկ կցված չէ և հրապարակված չէ:

Այսինքն, նվազագույնը իրավաչափ չէ կազմված Արձանագրությունը և մասնակիցների համար հասկանալի չէ, թե որոնք են բավարար գնահատված հայտերը և ով է հրավիրվել բանակցության:

Հանձնաժողովը Արձանագրությամբ հստակ պետք է որոշում կայացներ մասնակիցների հայտերի բավարար լինելու կամ մերժման ենթակա լինելու վերաբերյալ, որն այդպես էլ չի կայացրել:

Ստացվում է, որ Հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ և խախտել է սույն բողոքում թվարկված իրավական նորմերի պահանջները, որն ամիջականորեն հանգեցրել է Ընկերության օրինական շահերի և իրավունքների խախտմանը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ընկերությունը ղեկավարվելով վերոթվարկյալ իրավական հիմնավորումներով, խնդրել է դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը Հրավերի 1-ին մասի 5.2. կետին չհամապատասխանելու վերաբերյալ որոշումը՝ Հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

<u>3. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Ծանոթանալով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի բողոքի առարկային և բովանդակությանը հայտնում ենք՝

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի՝ իր կարիքների համար «Բժշկական ապահովագրության ծառայություններ» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման հրավերի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 24-ը դեկտեմբերի 2019 թվականի որոշումը հիմնված է հրավերի 5.2 կետով, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ, 40-րդ կետի 4-րդ ենթակետերով և 41-րդ կետով, մասնավորապես՝

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը

կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշել է, որ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ գնային առաջարկի «շահույթ» սյունակը լրացված չէ, ինչը համապատասխանում է ՀՀ կառավորության 04.05.2017թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետին, որտեղ հստակ սահմանված են հանձնաժողովի կողմից նիստի կասեցման պայմանները: Հանձնաժողովը գնահատել է «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի հայտը անբավարար:

Ընկերության բողոքում նշվում է որ վերջինս «շահույթ» սյունակը լրացրել է «-» նշանով և Ընկերության կարծիքով տվյալ նշանի լրացմամբ հստակ արտահայտել է իր դիրքորոշումը, որ շահույթ չի նախատեսում:

Այս մոտեցումը, մեր կարծիքով համահունչ չի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դրույթներին, մասնավորապես՝

օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ընկերությունն իր բողոքում նաև նշում է՝ «հրավերի 5.2-րդ կետով որևէ կերպ կարգավորված չէ այն դեպքը, որ եթե մասնակիցը չի նախատեսում շահույթ, ապա ինչ պետք է լրացնի քանի որ չնախատեսման դեպքում կամարտահայտությունը պետք է լինի բացասական ձևով, իսկ թվի լրացումը հնարավոր չէ, հնարավոր չէ նաև 0 (զրո) լրացումը քանի որ այն թիվ չէ»:

Այս պարագայում հարկ ենք համարում նշել, որ գնային առաջարկի լրացման վերաբերյալ դրույթները կարգավորված են Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով և հրավերի 5.2 կետով: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բողոքարկողի այն դիրքորոշումը, որ 0-ն թիվ չէ, բացարձակապես անհիմն է, քանի որ իսկ 0 (զրո)-ն ոչ բնական թիվ է «0 (զրո, լատ. nullus - ոչինչ), թիվ, որը ցանկացած թվի գումարելիս կամ նրանից հանելիս չի փոխում վերջինիս արժեքը, ցանկացած թվով բազմապատկելիս ստացվում է 0: Ցանկացած թիվ զրոյի բաժանելը համարվում է անիմաստ գործողություն» (https://hy.wikipedia.org/wiki/0_(%D5%A9%D5%AB%D5%BE, կամ հանրակրթական ուսումնական հաստատության 6-րդ դասարանի մաթեմատիկայի դասագիրք)

Բողոքում Ընկերության կողմից իրականացվում է համեմատություն «շահույթ» և «ԱԱՀ» սյունակների լրացման միջև և հարց է բարձացվում, թե ինչու Հանձնաժողովը «ԱԱՀ» սյունակը «-» նշանով լրացնելը համարում է հրավերի պահաջներին համապատասխան, իսկ «շահույթ» սյունակը՝ ոչ:

Հարկ է նշել, որ բարձրացված հարցի պատասխանը նշված է հրավերի N 2 հավելվածում՝ **եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:

**20 Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

Այսպիսով, ակնառու է, որ եթե մասնակիցը «ԱԱՀ» սյունակը չի լրացնում, լրացնում է որև է նշանով, մասնավորապես «-» կամ «X» կամ լրացնում է 0 թիվ/ 0(զրո) թվերով և տառերով,

ապա մասնակիցը հստակ հայտնում է, որ չի հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող:

Ընկերության մեկ այլ պնդումը թե գնահատող հանձնաժողովի արձանագրությունից հասկանալի չէ, թե որոնք են բավարար գնահատված հայտերը և ով է հրավիրվել բանակցությունների, չի համապատասխանում իրականությանը: Արձանագրությունում հստակ նշված է՝

«ա) Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան.

- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան բացառությամբ «Սիլ Ինշուրանսի» ԱՓԲԸ-ի և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի 1-ին մասի 5.2 կետին՝ մասնավորապես գնային առաջարկի «շահույթ»-ի սյունակը լրացված չէ:»:

Հայտնում ենք, որ Հանձնաժողովի գնահատման թերթիկները առկա են, իսկ նրանց հրապարակումը որևէ իրավական ակտով պարտադրված չի: Մասնակիցներից որևէ մեկը գրավոր կամ բանավոր չի դիմել Հանձնաժողովին՝ պահանջելով տրամադրել գնահատման թերթիկները կամ սկանավորված տարբերակը:

գ) Հանձնաժողովը քննարկեց և որոշեց բոլոր բավարար գնահատված հայտեր ներկայացված մասնակիցներին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցել և հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա ք. Երևան, Նալբանդյան 128, գլխավոր մասնաշենք, 5-րդ հարկ N501 սենյակ հասցեով, 2019 թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 10:00-ից մինչև 10:30-ը:»:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ բավարար գնահատված մասնակիցները սահմանված կարգով և ժամկետներում ծանուցվել են:

Այսպիսով, պնդում ենք, որ Հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ օրենսդրության պահանջներին համապատասխան և իր գործողություններով կամ անգործությամբ չի խախտել Ընկերության օրինական շահերը և իրավունքները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/102 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/102 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի հայտը մերժվել է գնային առաջարկի՝ հրավերի 1-ին մասի 5.2 կետի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով, մասնավորապես գնային առաջարկի «շահույթ»-ի սյունակը լրացված չէ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի 30.12.2019թ. բողոքը, «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի հայտը մերժվել է գնային առաջարկի՝ հրավերի 1-ին մասի 5.2 կետի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով, մասնավորապես՝ գնային առաջարկի «շահույթ»-ի սյունակը լրացված չլինելու հիմքով:

Այսպիսով՝ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որում «շահույթ» սյունակը չի լրացվել և գրվել է «-» նշանը:

Ուսումնասիրելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ գտնում եմ, որ գնային առաջարկի մեջ վերջինիս կողմից «շահույթ» սյունակի չլրացված լինելը չի կարող դիտարկվել որպես հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, ուստի նաև հայտի մերժման հիմք:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ գնային առաջարկի «շահույթ» սյունակում «-» նշանի փոխարեն պետք է նշեր «0», ապա գտնում եմ, որ «0» թվի պարտադիր նշելը, չի կարող դիտվել որպես պահանջ, առավել ևս այն պայմաններում, երբ հրավերով նույնպես չի նախատեսված լրացման նման կարգ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 30.12.2019թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի դադարեցնել 24.12.2019թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը Հրավերի 1-ին մասի 5.2 կետին չհամապատասխանելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**